Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-978[4]-23.09.2010,25.10.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքը կարգավորում է իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի իրավասությունը»:

2) 4-րդ կետը «ենթակա են հաշվառման» բառերը փոխարինել «ենթակա են պետական հաշվառման» բառերով:

Հոդված 2 . Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին օրենսդրությունը

Իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետի 2-րդ նախադասությունում «Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է գրանցված» բառերը փոխարինել «Իրավաբանական անձը համարվում է գրանցված, իսկ անհատ ձեռնարկատերը համարվում է հաշվառված» բառերով:

2) 2-րդ կետի 3-րդ նախադասությունում «սահմանված դեպքերի,» բառերից հետո լրացնել «պետական գրանցումը» բառերը, իսկ «անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառումն իրականացվում է ըստ նրանց հաշվառման կամ բնակության վայրի՝ անհատ ձեռնարկատիրոջ դիմումի համաձայն:»:

2) 3-րդ կետում «պետական գրանցման» բառերը փոխարինել «պետական գրանցման կամ պետական հաշվառման» բառերով.

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին կետում «իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցման» բառերը փոխարինել «իրավաբանական անձանց գրանցման և անհատ ձեռնարկատերերի գրանցման կամ հաշվառման» բառերով.

2) 2-րդ կետի 2-րդ նախադասությունում «իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը» բառերը փոխարինել «իրավաբանական անձի պետական

գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման կամ պետական հաշվառման» բառերով.

3) 3-րդ կետում «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման» բառերը փոխարինել «Իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման կամ պետական հաշվառման» բառերով:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետում «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումն» բառերը փոխարինել «Իրավաբանական անձանց պետական գրանցումը և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառումն» բառերով:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետում «իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումը» բառերը փոխարինել «իրավաբանական անձանց պետական գրանցումը և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառումը» բառերով, իսկ «հիմնարկների հաշվառումը» բառերը՝ «հիմնարկների պետական հաշվառումը» բառերով:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման համար սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը կարող են ներկայացվել բնակության կամ հաշվառման վայրի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում:»:

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Առևտրային կազմակերպությունների գրանցման (ստեղծման) համար անհրաժեշտ փաստաթղթերի (կանոնադրության, հիմնադիր ժողովի որոշման) նմուշային ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Պետական ռեգիստրի պաշտոնական կայք-էջում տեղադրված նմուշային ձևերում առևտրային կազմակերպությունների հիմնադիրները կամ նրանց կողմից լիազորված անձը լրացնում են միայն իդենտիֆիկացնող (անհատականացնող) տեղեկություններ:»:

3) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում ստուգվում են իրավաբանական անձի կազմավորման կարգը, ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունն ու համապատասխանությունն օրենքների պահանջներին: Առևտրային կազմակերպությունների կանոնադրության համապատասխանությունն օրենքի պահանջներին չի ստուգվում: Առևտրային կազմակերպությունների համար ստուգվում են միայն ներկայացված կանոնադրության ամբողջականությունն ու սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված, կանոնադրության մեջ ներառման ենթակա, տեղեկությունների, ինչպես նաև իրավահաջորդության մասին դրույթների լիարժեքությունը և ճշտությունը:»:

4) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Իրավաբանական անձի փաստաթղթերի ստուգումից հետո պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները լրացվում են պետական գրանցման քարտում (այսուհետ՝ քարտ), կենտրոնական մարմնի տրամադրած կոդերին համապատասխան՝ կոդավորվում է իրավաբանական անձը: Տարածքային ստորաբաժանման ղեկավարը գրանցվող իրավաբանական անձին շնորհում է գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը («Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու եւ հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով), ստորագրում և կնքում է քարտը և գրառում է անհրաժեշտ տեղեկություններ պետական գրանցամատյանում ու տալիս է իր կողմից ստորագրված և կնքված պետական գրանցման վկայականը: Իրավաբանական անձի կանոնադրության տիտղոսաթերթի վրա կատարվում է իրավաբանական անձի պետական գրանցման մասին տեղեկությունների գրառում: Անհատ ձեռնարկատիրոջ փաստաթղթերի ստուգումից հետո պետական հաշվառումը մերժելու հիմքեր (հակասություններ ներկայացված փաստաթղթերում, հաշվառված լինել) չհայտնաբերելու դեպքում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները լրացվում են պետական հաշվառման քարտում: Տարածքային ստորաբաժանման ղեկավարը հաշվառվող անհատ ձեռնարկատիրոջը շնորհում է պետական հաշվառման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը

(«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով), ստորագրում և կնքում է քարտը և գրառում է անհրաժեշտ տեղեկություններ պետական գրանցամատյանում ու տալիս է իր կողմից ստորագրված և կնքված պետական հաշվառման վկայականը:»:

Հոդված 9. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առևտրային կազմակերպությունների համար ստուգվում են միայն ներկայացված կանոնադրության փոփոխությունների կամ լրացումների (կամ նոր խմբագրությամբ կանոնադրության) ամբողջականությունն ու սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված, կանոնադրության մեջ ներառման ենթակա, տեղեկությունների, ինչպես նաև իրավահաջորդության մասին դրույթների լիարժեքությունը և ճշտությունը:».

2) 4-րդ կետում «պետական գրանցման» և «պետական գրանցումը» բառերը համապատասխանաբար փոխարինել «պետական հաշվառման» և «պետական հաշվառումը» բառերով.

3) 5-րդ կետից հանել «(անհատ ձեռնարկատիրոջ)» և «(պետական գրանցման վայրի)» բառերը.

4) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վայրի փոփոխությամբ պայմանավորված փոփոխության պետական հաշվառումը կատարում է մինչև փոփոխությունը հաշվառելու (գրանցելու) պահը հաշվառած (գրանցած) տարածքային ստորաբաժանումը, որը համապատասխան պետական հաշվառումը կատարելուց հետո անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման գործերը տեղափոխում է համապատասխան տարածքային բաժին:»:

Հոդված10. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առևտրային կազմակերպությունների համար ստուգվում են միայն ներկայացված կանոնադրության փոփոխությունների կամ լրացումների (կամ նոր խմբագրությամբ կանոնադրության) ամբողջականությունն ու սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված, կանոնադրության մեջ ներառման ենթակա, տեղեկությունների, ինչպես նաև իրավահաջորդության մասին դրույթների լիարժեքությունը և ճշտությունը:»:

Հոդված 11. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 3-րդ կետում «հանձնվում է ստացականով:» բառերից հետո լրացնել «Հարցումը կարող է ուղարկվել էլեկտրոնային եղանակով:» նախադասությունը, «30 օրվա» բառերը փոխարինել «20 օրվա» բառերով և «այլ պատասխան» բառերից հետո լրացնել «(բացի պարտավորությունների առկայության մասին պատասխանից)» բառերը.

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո, լուծարման պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում իրավաբանական անձի լուծարումը համարվում է գրանցված և 1 օրվա ընթացքում դիմողին տրվում է տեղեկանք: Այս դեպքում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման ղեկավարն անհրաժեշտ տեղեկությունները լրացնում է քարտերում, ստորագրում ու կնքում է դրանք, և լուծարման մասին տեղեկությունները գրառում է պետական գրանցամատյանում:»:

3) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման դեպքում անհատ ձեռնարկատերը պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում է ներկայացնում դիմում և պետական գրանցման (հաշվառման) վկայականը, ինչի վերաբերյալ փաստաթղթերի ընդունման մատյանում կատարվում է գրառում: Դիմումը ներկայացնելու պահից անհատ ձեռնարկատերը համարվում է պետական հաշվառումից հանված և 1 օրվա ընթացքում դիմողին տրվում է տեղեկանք:»:

4) 7-րդ կետից հանել «(այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարած)» բառերը.

5) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու համար պետական տուրք չի գանձվում:»:

Հոդված12. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պետական ռեգիստր փաստաթղթերի ներկայացման օրը պետական ռեգիստրում դիմումի ստացման ամսաթիվն է: Դիմումի ստացման մասին կատարվում է գրառում փաստաթղթերի ընդունման մատյանում:».

2) 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) մեկ թերթից ավելի ծավալ ունեցող փաստաթղթի, այդ թվում՝ փաստաթղթի պատճենի թերթերը պետք է լինեն համարակալված.».

3) 2-րդ կետը «ա» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ա.1» ենթակետով.

«ա.1) մեկ թերթից ավելի ծավալ ունեցող փաստաթղթի, այդ թվում՝ փաստաթղթի պատճենի թերթերը պետք է լինեն կարված, ինչը պետք է ապահովի փաստաթղթի ամբողջականությունը.».

4) 2-րդ կետի «ը» ենթակետում «Կանոնադրության փոփոխությունը» բառերից հետո լրացնել «կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերը.

5) 3-րդ կետում «Իրավաբանական անձի դիմումը» բառերը փոխարինել «Դիմումը» բառով.

6) 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ.1» ենթակետով.

«դ.1) օրենքով սահմանված այլ տեղեկություններ.».

7) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «5.1» և «5.2» կետերով.

«5.1. Պետական գրանցումների (հաշվառումների) իրականացման համար սույն օրենքով սահմանված փաստաթղթերը սույն հոդվածի 5.2 կետով նախատեսված կարգն ուժի մեջ մտնելուց հետո կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով:

5.2. Փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգը և պետական գրանցման (հաշվառման) առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»:

Հոդված 13. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպությունների պետական գրանցումը (սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված, պետական գրանցման (ստեղծման) համար անհրաժեշտ փաստաթղթերը նմուշային ձևերով ներկայացնելու դեպքում), ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառումն իրականացվում է ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:».

2) 3-րդ կետում «Գրանցումը մերժելու» բառերը փոխարինել «Պետական գրանցումը (հաշվառումը) մերժելու» բառերով.

3) 7-րդ կետում «իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը» բառերը փոխարինել «իրավաբանական անձի պետական գրանցումը կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը» բառերով, իսկ «գրանցումը» և «գրանցման» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «(հաշվառումը)» և «(հաշվառման)» բառերը.

4) 8-րդ կետում «գրանցումը» և «գրանցումից» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «(հաշվառումը)» և «(հաշվառումից)» բառերը:

Հոդված14. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 4-րդ կետում «գրանցված բոլոր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի» բառերը փոխարինել «բոլոր գրանցված իրավաբանական անձանց և հաշվառված անհատ ձեռնարկատերերի» բառերով.

2) 4-րդ կետի վերջին պարբերությունում «իրավաբանական անձի գրանցման համարը» բառերից հետո լրացնել «հարկ վճարողի հաշվառման համարը,» բառերը:

3) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Պետական միասնական գրանցամատյանից իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական հաշվառման մասին տեղեկությունները պարբերաբար տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը: Տեղեկությունների տրամադրման կարգը (այդ թվում՝ տեղեկությունների կազմը, տրամադրման պարբերականությունը) սահմանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահը:

Պետական միասնական գրանցամատյանից իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական հաշվառման մասին տեղեկությունները պարբերաբար տրամադրվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին:

Տեղեկությունների տրամադրման կարգը (այդ թվում՝ տեղեկությունների կազմը, տրամադրման պարբերականությունը) սահմանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահը:»:

Հոդված 15. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1) վերնագրում և 1-ին կետում «գրանցման վկայականը» բառերը փոխարինել «գրանցման (հաշվառման) վկայականը» բառերով, իսկ 1-ին կետի 2-րդ նախադասությունում «գրանցման» բառից հետո լրացնել «(հաշվառման)» բառը.

2) 3-րդ կետի «ե» ենթակետում «կոդը» բառից հետո լրացնել «և հարկ վճարողի հաշվառման համարը» բառերը.

3) 4-րդ կետում և 4-րդ կետի «բ», «գ», «դ» ենթակետերում «պետական գրանցման» բառերը փոխարինել «պետական հաշվառման» բառերով.

4) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ.1» ենթակետով.

«գ.1) անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը.».

5) 4-րդ կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) հաշվառման կամ բնակության վայրը.».

6) 4-րդ կետի «է» ենթակետում «պետական գրանցումն» բառերը փոխարինել «պետական հաշվառումն» բառերով.

7) 4-րդ կետի «ը» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

8) 5-րդ և 7-րդ կետերում «պետական գրանցման» բառերից հետո լրացնել «(հաշվառման)» բառը:

Հոդված16 . Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19. Պետական գրանցման (հաշվառման) վկայականների ոչնչացման կարգը

Պետական գրանցման և հաշվառման վկայականները ոչնչացնելու նպատակով պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում ստեղծվում է հանձնաժողով, որի իրավունքները և

պարտականությունները, ինչպես նաև պետական գրանցման (հաշվառման) վկայականների ոչնչացման կարգը և ժամկետները սահմանվում են պետական ռեգիստրի կանոնադրությամբ»:

Հոդված17. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է.1» ենթակետով.

«է.1) իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը.».

2) 5-րդ կետի «ա», «բ», «գ» ենթակետերում «պետական գրանցման» բառերը փոխարինել «պետական հաշվառման» բառերով.

3) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ.1» ենթակետով.

«գ.1) անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը.».

4) 5-րդ կետի «զ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) հաշվառման կամ բնակության վայրը».

5) 5-րդ կետի «է» և «ը» ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

6) 5-րդ կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«թ) օրենքով սահմանված դեպքերում պետական հաշվառումից հանվելու դեպքում՝ նշում այդ մասին:»:

Հոդված18. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«գ) կանոնադրություն՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից.».

2) 1-ին կետի վերջին պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

3) 2.1. կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2.1. Առևտրային կազմակերպությունները, սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերից բացի, ներկայացնում են նաև «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ֆիրմային անվանման գրանցման մասին հայտը: Եթե առևտրային կազմակերպությունները չեն ներկայացրել սույն կետով սահմանված հայտը, ապա նրանք սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված դիմումի մեջ պետք է ներառեն տեղեկություններ ֆիրմային անվանման գրանցման հնարավորության մասին եզրակացության համարի և տրման օրվա մասին:»:

4) 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 կետ.

«3.1. Հիմնադրման միջոցով ստեղծված իրավաբանական անձի հիմնադիր (մասնակից) իրավաբանական անձով իրավաբանական անձինք պետական գրանցման համար, սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված փաստաթղթերից բացի, ներկայացնում են նաև հիմնադիր իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը: Սույն կետում նշված փաստաթուղթը չի ներկայացվում, եթե հիմնադիրը (մասնակիցը) պետություն կամ համայնք է:»:

5) 4-րդ կետում «Պետական գրանցման» բառերը փոխարինել «Պետական հաշվառման» բառերով.

6) 4-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) հաշվառման մասին դիմում.»:

7) 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

«5. Սույն հոդվածի համաձայն ներկայացվող դիմումներում լրացման ենթակա տվյալների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 19. Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «փոփոխությունը գրանցելու» բառերը փոխարինել «փոփոխությունը հաշվառելու» բառերով, իսկ «, իսկ "է" եւ "ը" ենթակետերի դեպքում՝ միայն դիմում» բառերը հանել:

Հոդված 20. Օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում «պետական գրանցման վկայականի» բառերը փոխարինել «պետական գրանցման (հաշվառման) վկայականի» բառերով:

Հոդված21. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի «գ.1» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու համար ներկայացվում են՝

ա) դիմում.

բ) պետական գրանցման (հաշվառման) վկայականը:»:

3) 3-րդ կետում «պետական գրանցման վկայականի մարումն» բառերը փոխարինել «հաշվառումից հանումն» բառերով, իսկ «պետական գրանցման վկայականն» բառերը՝ «պետական գրանցման (հաշվառման) վկայականն» բառերով.

4) 5-րդ կետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սնանկ ճանաչված անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու համար ներկայացվում են դիմում, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը, պետական գրանցման (հաշվառման) վկայականը և իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների կատարման մասին»:

Հոդված 22. Օրենքի 4-րդ գլխի վերնագրում «պետական գրանցման» բառերից հետո լրացնել «(հաշվառման)» բառը:

Հոդված 23. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետում «պետական գրանցման, գործունեության դադարման պետական գրանցումն» բառերը փոխարինել «պետական հաշվառման, հաշվառումից հանումն (օրենքով սահմանված դեպքերում)» բառերով, իսկ «կամ գրանցումն» բառերը՝ «կամ հաշվառումն» բառերով:

Հոդված 24 . Անցումային դրույթ

Մինչև 2011 թվականի հունվարի 15-ը հարկ վճարողներին հաշվառման համար տրամադրող մարմինը պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմնին տրամադրում է 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ տրամադրված հաշվառված բոլոր հարկ վճարողների հաշվառման համարների մասին ամբողջական տեղեկատվություն:

Հոդված 25. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին», ««Իրավաբանական անձանց պետական գրացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	I. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Օրենքի նախագծի 3-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե որ Օրենսգրքի մասին է խոսքը:	Ընդունվել է. «օրենսգքի» բառից առաջ լրացվել է «սույն» բառը.
	2. Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը, համաձայն որի. «Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև սույն կետում սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման»:	Ընդունվել է. Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման:»: Ընդունվել է, համապատասխան փոփոխություն կատարվել է նաև ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ

	Տվյալ առաջարկության ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան լրացում կատարել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կարող է վերակազմավորվել միայն բաժնետիրական ընկերության: Միաժամանակ, նույն առաջարկության 2-րդ նախադասությունում նշված «սույն կետում սահմանված քանակը» դրույթի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ ոչ Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասում, ոչ էլ Նախագծի քննարկվող հոդվածում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թվի մասին խոսք չի գնում: Բացի այդ, առաջարկում ենք նաև քննարկել, թե լուծարման որ ընթացակարգի մասին է խոսք գնում:	օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում: Ընդունվել է, նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման»:
	II. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասինե ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի 24-րդ հոդվածի «1-ին կետով նախատեսված 1-ին պարբերությունը ենթակա է վերախմբագրման, իսկ 3-րդ պարբերությունն առաջարկում ենք հանել, քանի որ այդ հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են նույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով: 2. Լրացնել նոր 25-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 25.	Ընդունվել է. Կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «1. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ տարի ժամկետով, եթե ընկերության կանոնադրությամբ այլ, ավելի երկար, ժամկետ սահմանված չէ: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը կազմված է 3 անդամներից, եթե ընկերության կանոնադրությամբ անդամների ավելի մեծ քանակ նախատեսված չէ». Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 25-րդ

	Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետը «բաժնետիրական ընկերության» բառերից հետո լրացնել «կամ առևտրային կոոպերատիվի» բառերով:	հոդվածով.
	III. ««Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի 4-րդ հոդվածի «1-ին մասում առաջարկում ենք դրույթը լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ դիմումի համաձայն» բառերով: 2.Նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. 7) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «5.1» և «5.2» կետերով. «5.1. Պետական գրանցումների (հաշվառումների) իրականացման համար սույն օրենքով սահմանված փաստաթղթերը սույն հոդվածի 5.2 կետով նախատեսված կարգն ուժի մեջ մտնելուց հետո կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: 5.2. Փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգը և պետական գրանցման (հաշվառման) առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»:	Ընդունվել է. Ընդունվել է.
	3. Նախագծի 18-րդ հոդվածի «1-ին մասով նախատեսված առաջարկությունը հստակեցման կամ խմբագրման կարիք ունի:	Ընդունվել է. 21-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «գ) կանոնադրություն՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի)

		կողմից.».
	4. Նախագծի 18-րդ հոդվածի «3-րդ մասում «առևտրային իրավաբանական անձինք» բառերն առաջարկում ենք փոխարինել «առևտրային կազմակերպությունները» բառերով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, «առևտրային իրավաբանական անձինք» բառերը փոխարինվել են «առևտրային կազմակերպությունները» բառերով.
	IV. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինել «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:	Ընդունվել է: Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինվել են «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:
	2. Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 170.2-րդ և 170.5-րդ հոդվածների վերնագրերում:	Ընդունվել է: Օրենսգրքի 170.2-րդ և 170.5-րդ հոդվածների վերնագրերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 170.2. Իրավաբանական անձի պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման կամ լիցենզավորման մասին տվյալները հարկային տեսչության մարմիններ սահմանված ժամկետում չհայտնելը», «Հոդված 170.5. Պետական լիազորված մարմինների պաշտոնատար անձանց կողմից անհատ ձեռնարկատերերին սահմանված ժամկետներում չհաշվառելը կամ իրավաբանական անձանց սահմանված ժամկետներում չգրանցելը (չվերագրանցելը) կամ գրանցումը (վերագրանցումը) անհիմն մերժելը»

	V. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.	
	1. Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինել «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:	Ընդունվել է: Նախագծի տեքստում «գրանցում» և «հաշվառում» (բոլոր հոլովաձևերով) բառերը փոխարինվել են «պետական գրանցում» և «պետական հաշվառում» բառերով:
	2. Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 280-րդ հոդվածում:	Ընդունվել է. Նախագծում լրացվել է նոր 4-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀՈԴՎԱԾ 4. Օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասում «գրանցման» բառը փոխարինել «պետական գրանցման, հաշվառման» բառերով: »
	3. Անհրաժեշտ է վերախմբագրել Նախագծի 3-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 212-րդ հոդվածից հանելով «՝ապրանքներ իրացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպություններում կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված անձանց կողմից առևտրի (ծառայությունների) ոլորտում» բառերը: Առաջարկը պայմնավորված է նրանով, որ բնակչությանը ծառայություններ մատուցողների շրջանակը ավելի լայն է և տրամաբանական է չնշել խմբերը:	Ընդունվել է նախագծի 3-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. . «Օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասում «կազմակերպություններում կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված անձանց» բառը փոխարինել «կազմակերպություններում կամ անհատ ձեռնարկատերի» բառերով»: